



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



«14» 08 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0148-21

Ձեռնարկողը՝

«Աքսես Բոնասայթ» ՍՊԸ

Ք. Երևան, 2-րդ Աղյուսագործների փող. տուն 48

Գործունեությունը՝

Մարմաշեն համայնքի Մեծ Սարիար բնակավայրում
59.1 հա տարածքների անտառապատման ծրագրի
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ

Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

Թիվ ԲՓ 0148-21

< 17 > 08 2021թ.

Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Մեծ Սարիար բնակավայրում 59.1հա տարածքների անտառապատում ծրագրի նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«Աքսես Բոնասայթ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝

«Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝

Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի
Մեծ Սարիար բնակավայր

«Էյ-Թի-Փի» հիմնադրամի կողմից 2021թ. աշնանը և 2022թ. գարնանը նախատեսվում է իրականացնել Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Մեծ Սարիար բնակավայրում 59.1հա տարածքների անտառապատում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 5) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Համաձայն հայտի համայնքային անտառտնկման համար նախատեսված տարածքը գտնվում է Շիրակի լեռնաշղթայի միջնամասի հյուսիսահայաց լանջերում, Մեծ Սարիար գյուղից դեպի հյուսիս, հյուսիս-արևմուտք ընկած ուղղությամբ: Ընտրված են երկու տարածքներ՝ որոնցից յուրաքանչյուրում հողային պայմանները բարենպաստ են անտառատեղծման համար:

«Սարիար-1» տեղամասն իրենից ներկայացնում է լանջերի զգալի թեքությամբ լեռնային տափաստան, դեգրադացման միտումներով, տեղ- տեղ առկա էրոզիայի սկզբնական օջախներով, իսկ գյուղատնտեսական առումով, որպես խոտհարք, հիմնականում կորցրել է իր նշանակությունը:

«Սարիար-2» տեղամասում նախկինում մշակել են կերային մշակաբույսեր, սակայն վերջին ավելի քան 20 տարիներին տարածքը չի մշակվել՝ գյուղատնտեսության ցածր արդյունավետության պատճառով: Այս նկատառումներով՝ հողօգտագործման բնույթի հնարավոր փոփոխությունը երկու տարածքներում էլ նպատակային է:

Երկու տարածքներում էլ անտառային զանգվածները կարևորագույն դեր կունենան լանդշաֆտներում ընթացող կայունացման գործընթացների և կառուցվածքային ու գործառնության բաղադրիչ տարրերի՝ հողածածկի և կենսառեսուրսների պահպանության գործում, հատկապես կլիմայական ռիսկերի մեղման ու տարածքի ջրային հաշվեկշռի կարգավորման առումով:



Անտառտնկման համար ընտրված՝ Մեծ Սարիար գյուղի տարածքներն ընկած են՝ բարեխառն, ամբողջ տարին համեմատաբար խոնավ կլիմայով գոտում:

Բացարձակ նվազագույն ջերմասիճանը կազմում է $-28,4^{\circ}\text{C}$, բացարձակ առավելագույն ջերմասիճանը՝ $34,6^{\circ}\text{C}$: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 600-650մմ, իսկ վեգետացիայի շրջանում 300-350մմ:

Համաձայն հայտի Մեծ Սարիար գյուղում անտառային զանգվածներ հիմնելու համար ընտրված տարածքները ջրաբանական առումով պատկանում են Փամբակ գետի վերին հոսանքի ավազանին: «Սարիար-1» տարածքի ստորին՝ հովտային մասի եզրով հոսում է Փամբակի ձախակողմյան վտակներից մեկը, իսկ «Սարիար-2» տարածքի ստորոտվ անցնում է Ջաջուռ գետի ձախակողմյան վտակներից մեկը: Այս ջրային էկոհամակարգերը հոսում են անտառտնկման համար նախատեսված տարածքների ստորին եզրերով, խիստ սակավաջուր են:

Հողաձածկը՝ խորքային եռացող, միջին հումուսացված, սակավազոր կավավազային տեղ-տեղ թույլ էրոզացված կրազերծ սևահող է: Տարածքի հողի պրոֆիլը թույլ ամրացած է, չափավոր՝ քարակոպճային, հումուսային հորիզոններից խորը քարքարոտ և ամրացած է:

Հայցվող տարածքները գտնվում են ծովի մակարդակից 1950-2200մ բարձրությունների վրա, բուսականության հիմնական տիպերը լեռնային տափաստաններն են և մարգագետնատափաստանները:

Համաձայն հայտի իրականացված դաշտային այցելությունների, ինչպես նաև առկա գրականական տվյալների, անտառտնկման համար նախատեսվող տարածքում պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները բացակայում են:

Մարզում գտնվող «Արփի լիճ» ազգային պարկը և բնության 16 հուշարձանները գտնվում են հայցվող տարածքից բավականին հեռավորության վրա և անտառտնկման աշխատանքների ժամանակ իրենց վրա որևէ ազդեցություն չեն կրելու:

Համաձայն հայտի անտառպատման համար նախատեսվող տարածքում առկա են Մասրենի առատափուշը, որոնք չեն կազմում մեկ ամբողջական խումբ, այլ զբաղեցնում են լանջերից մեկը, լանջն ի վար տարածված են հատվածներով՝ կազմելով հորիզոնական, իրարից տասնյակ մետրերով հեռավորությամբ տեղադրված փոքր խմբեր:

Ընտրված տարածքները հանդիսանում են գյուղատնտեսական արոտավայրեր, սակայն, որպես բնական կերհանդակ՝ խոտհարք կամ արոտավայր, ունեն ցածր արդյունավետություն:

Նախատեսվող անտառտնկարկների հիմնման համար կատարվել է լանդշաֆտային գոտուն համապատասխան ծառատեսակների ընտրություն: Նախատեսվում է օգտագործել սոճի սովորական, սոճի դրիմյան, կաղնի խոշորառեջ, հացենի սովորական, տանձենի կովկասյան, խնձորենի արևելյան, կեչի լիտվինովի, կեչի ելունդավոր ծառատեսակները, թփերից՝ ազնվամորի, հաղարջենի, թանթրվենի:

Ըստ հայտի անտառտնկման յուրաքանչյուր տարածքի համար, տնկիների տեսակային կազմին համապատասխան, կազմվել է տնկման սխեմա, որտեղ նախապատվությունը տրվել է խառը տեսակակազմին, որպես էկոլոգիական կայունության ապահովման նախադրյալ: Տեսակները խառնելու և տեղաբաշխելու համար նկատի է առվել ինչպես հողակլիմայական պայմանները, միկրոռելիեֆի ձևերը և կողմնադրությունը, այնպես էլ տեսակների փոխհարաբերությունը՝ կայուն համակեցություններ ստեղծելու նպատակով: Նախատեսված է ասնեղնատերևավոր (սոճի Կովկասյան) և լայնատերևավոր տեսակները խառնել՝ ինչպես շարքերով, այնպես էլ շարքերի ներսում:

Բոլոր տնկիների համար կարևոր նախապայման է հանդիսանում որպեսզի վերգետնյա և ստորգետնյա մասերը լինեն նորմալ համամասնության մեջ, լավ զարգացած և



